Հավելված
ՀՀ փոխվարչապետի N 324 - Ա
որոշման

«ԽՄԵԼՈՒ ՋՐԻ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԲԱՐԵԼԱՎՈՒՄ»
ԾՐԱԳԻՐ

1.	Ծրագրի նպատակը	Սոցիալական պայմանների բարելավման նպատակով նախատեսվում է բարելավել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի խոշորացված համայնքի Լեհվազ բնակավայրի խմելու ջրի արտաքին համակարգը:
2.	Ծրագրի բարեգործական որակման նպատակը	Նախատեսվում է ծրագրի շրջանակներում օրենքով սահմանված կարգով օգտվել ՀՀ հարկերի, տուրքերի պարտադիր վճարների գծով օրենքով սահմանված արտոնություններից
3.	Բարեգործը	«Հայաստան» համահայկական հիմնադրամ (ՀՀ, քաղ. Երևան, Բաղրամյան պողոտա 26/1, ՀՎՀՀ՝ 02507456)
4.	Ծրագիրը կատարողը	«Հայաստան» համահայկական հիմնադրամ (ՀՀ, քաղ. Երևան, Բաղրամյան պողոտա 26/1, ՀՎՀՀ՝ 02507456)
5.	Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի խոշորացված համայնքի Լեհվազ բնակավայր՝ համայնքային զարգացում
6.	Ծրագրի բյուջեն	18,969,395 դրամ
7.	Բարեգործություն ստացողը	Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի խոշորացված համայնքի Լեհվազ բնակավայրի բնակիչներ
8.	Ծրագրի իրականացման տևողությունը	2025 թվականից հունիսի 6-ից մինչև 2026 թվականի մարտի 6-ը
9.	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	Նախատեսվում է բարելավել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի խոշորացված համայնքի Լեհվազ բնակավայրի խմելու ջրի արտաքին համակարգը: Կիրականացվեն քլորակայանի տեխնոլոգիական, երկաթ բետոնե, էլեկտրականության մոնտաժման, օրվա կարգավորիչ ջրամբարի ցանկապատման,

		խողովակաշարերի անցկացման և հորերի հիմնանորոգման աշխատանքներ: Իրականացվելու է 2025 թվականի հունիսի 6-ից մինչև 2026 թվականի մարտի 6-ն ընկած ժամանակահատվածում՝ 18,969,395 դրամի չափով:
10.	Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը	Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի խոշորացված համայնքի Լեհվազ բնակավայրի խմելու ջրի արտաքին համակարգի բարելավման շինարարական աշխա-տանքների իրականացում՝ 18,969,395 դրամի չափով:
11.	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը	Կազմակերպական ծախսեր չեն նախատեսվում:
12.	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ	Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրիի համայնքապետարան
13.	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի հունվարի 16-ի N 66-Ն որոշմամբ հաստատված բարեգործական ծրագրերը բարեգործական որակելու և գրանցելու կարգի 25-րդ կետով սահմանված կարգով կներկայացվեն տեղեկություններ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Տ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

26.05.2025
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ